


10211

ԱՐԵՎՈՆԻԿԻԶԵ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ





ЧРОЦВСИРЪВР ВАДР ЗБРЧРЪВРъ, УПКЗБУ



24 SEP 2009

Գ. Կ. ՈՐՁՈՆԻՒԹՅՈՒՆ 2009

ՅԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

ԵԿԸՄ


O-95

ՄԱՍԻՆ

ար.



Թարգմանված և յերկրորդ  
լրացրած հրատարակությունից



ՊԵՏՀՐԱՏ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

4 SEP 2013

10211

Գրիգորի Կոնստանտինովիչ  
ՕՐԴՈՆԻԿԻԶԵ  
1886—1937  
կենսագրական տեղեկալի



Գրիգորի Կոնստանտինովիչ Որջոնիկիձեն (կուսակցական մականունը՝ Սերգո) ծնվել է 1886 թվի հոկտեմբերի 28-ին (նոր տոմարով) Արևմտյան Վրաստանի Գորեշա գյուղում:

Սերգոյի հայրն ուներ ընդամենը միքանի դեսյատին ուժապառ հող: Յեղիպտացորենը միայն միքանի ամիս եր բավականացնում ընտանիքին, չխոսելով արդեն մնացածի մասին: Հայրն ստիպված եր լինում դաշտային աշխատանքների միջև ընկած ժամանակամիջոցում ապրուստ վաստակելու համար ձիաթուրի դնալ—հանքից մարդանեց կրելու: Սերգոյի մայրը, ծննդաբերությունից հետո շատ չանցած, մահացավ: Յերեք ամսական յերեխային իր մոտ վերցրեց մորաքույրը, վորը կերակրում եր նրան և փոխարինուած հարազատ մորը:

Ցոթ տարեկան Որջոնիկիձեյին տվին Գորեշայի յեկեղեցական-ծխական գպրոցը, վորն ավարտելուց հետո նա մտավ Խաչուրիի յերկաթուղային դպրոցը: Մի տարուց հետո, ընտանիքի թշվառ վիճակի պատճառով նա ստիպված յեղավ թողնել զպրոցը և վերադառնալ գյուղ: Միենույն ազգանունը կրող ժողովրդական ուսուցիչ Սիմոն Որջոնիկիձեն Սերգոյին իր հետ տարավ Խորի ավանը, վորտեղ ինքը



6199

39

Г. К. ОРДЖОНИКИДЗЕ

О МОЛОДЕЖИ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939

դպրոցի վարիչ եր : Այնտեղից նրանք փոխադրվեցին Լանչխութիւն , վերջապես , Խորագութիւն : 1898 թվի դաշնանը Սերգոն ավարտեց Խորագութիւն յերկասյան դպրոցը :

1900 թվի աշնանը նրա հորեղբորմորդի Տարասի Որջոնիկիձեն և ազգական Պալել Մաճավարիանին Սերգոյին տարան Թթվիլսի (Թթվիլս) : Այստեղ նա սովորում եր քաղաքային (Միլիայլովակայա) Հիւանդանոցին կից Փելդշերական դպրոցում :

Այդ դպրոցում սովորում եյին առավելապես ժողովրդի սորորին խավերի զավակները : Աշակերտների մեջ ուժեղ եյին հեղափոխական տրամադրությունները : Առաջացան սոցիալ-դեմոկրատական խմբակներ , վորոնցից մեկի մեջ ժոտավ նաև Սերգո Որջոնիկիձեն : 1901—1902 թվականներին նա արդեն մասնակցում եր դպրոցական սոցիալ-դեմոկրատական խրժքակին :

1903 թվին Սերգոն մտավ ՌՄԴԲԿ-ի մեջ , վորակոս բոլշևիկ : Սերգոյի ամբողջ հերոսական , գեղեցիկ կյանքը՝ լի հեղափոխական արիությամբ ու խիզախությամբ , անցակ կուսակցության , բանվոր դասակարգի աչքի առաջ , և նինի ու Ստալինի , Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեյի ղեկավարությամբ :

Ֆելդշերական դպրոցն ավարտելուց հետո 1905 թվի դարնանը Որջոնիկիձեն վերադառնում է Արևմտյան Վրաստան , մասնավորապես Բաթումի : Նա ամենաակտիվ մասնակցություն և ցույց տալիս կուսակցական աշխատանքին : Նա պրոպագանդիստ և և ադիտատոր : Նա կազմակերպում է միտինգներ—դիմկուսիաներ մենչեւիկների դեմ : Սերգո Որջոնիկիձեն իր բոլցեկիյան յելույթներում ոգույնում եր ընկեր Ստալինի «Անցողակի կուսակցական տարածայնությունների մասին» բրոշյուրից՝ դրված 1905 թվի սկզբին :

1905 թվի սեպտեմբերին Որջոնիկիձեն փոխադրվեց Գուգառուտի (Արխազիա) : Այստեղ նա աշխատում է իրեկ բուժակ տեղական հիվանդանոցում : Արդեն այս ժամանակաշրջանում նա պրոֆեսիոնալ հեղափոխական է , մարտիկ , վորի համար կյանքի խմաստը միայն հեղափոխության մեջ է : 19 տարեկան պատանի Սերգոն արդեն Գուգառուտիի կուսակցական կազմակերպության՝ ընդհանուրի կողմից ճա-

նաչված ղեկավարն է , կուսակցության Սուխումիի գարվառական կոմիտեյի անդամ , ընդհատակյա աշխատանքի տաղանդավոր կազմակերպիչ ու բոցաշունչ հոետոր :

Յերբ Գուգառուտիում լուր ստացվեց 1905 թվի հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստի մասին , Սերգո Որջոնիկիձեն թուուցիկ միտինգում կազմակերպեց քաղաքի կենտրոնում : Այդ միտինգում նա բացատրեց ունկնդիրների մասսային , վոր ցարի տապալումն ու ինքնակալության վոչչացումը միայն կարող են տալ իսկական ազատություն : Վոստիկանությունը չհամարձակվեց այն ժամանակ ձերբակալել յերիտասարդ բոցաշունչ ագիտատորին :

Յերիտասարդ հեղափոխականի առաջին ձերբակալությունը տեղի ունեցավ 1906 թվի հունվարի 6-ին Գուգառուտիի մոտ գտնվող բոմբարի գյուղում : Սերգոն ձերբակալվեց զենք բեռնաթափելու մոմենտին և նետվեց Սուխումիի բանուք , վորակ մնաց մինչև 1906 թվի հունիսի 7-ը : Այնուհետև նա ազատվեց յերաշխալորությամբ և մեկնեց Թթվիլսի : Այստեղ բոլցեկիյան «Դրո» («Ժամանակ») լրագրի խմբգրատանը առաջին անդամ նա հանդիպեց ընկեր Ստալինին , վորն այդ լրագրի խմբգրին եր :

1906 թվի ոգոստոսին Որջոնիկիձեն , սիրանկայից թագնըվելով , անցակ արտասահման՝ բեռլին : Շուտով նա վերադառնում է Ռուսաստան : 1907 թվի մարտին նա մտցվեց Բագվի բոլցեկիյան կոմիտեյի մեջ , վորին դլխավորում եր ընկեր Ստալինը , և վորի մեջ եյին նաև Շահումյանը , Զափարիձեն , Սպանդարյանը :

Բագվի ժամանակաշրջանը խոշորագույն նշանաձող է Որջոնիկիձեյի ձևակորման մեջ , իբրև բոլցեկիյան կուսակցության ականավոր գործչի : Բագվի նավթահանքերը գալու առաջին իսկ որվանից նրա հանդեպ ջերմագին սեր սկսեցին տածել բանվորները , վորոնց կազմը չափազանց այլազան եր : Այստեղ կային թուրքեր , ոռուներ , վրացիներ , հայեր : Որջոնիկիձեն կարողացավ ընդհանուր լեզու գտնել շահագործվող պրոլետարների այլ ամբողջ տարացեղ ժամանակի հետ , կարողացավ համախմբել նրանց բոլցեկիդմի լոգունդների չուրջը : Լինելով Ռոմանիի կուսակցական կազմակերպիչը Բալախանի ուայոնում , նա յեռանդագին պատ-

բաստվում ե Բագվի 1907 թվի մայիսի 1-ի բանվորական մասսայական ցույցին, ակտիվ մասնակցում է III Պետական Դումայի ընտրական կամպանիային, դործուն կերպով մերկացնում է մենչեւիներին, դաշնակներին, եսերներին:

1907 թվի նոյեմբերին վլոստիկանությունը ձերբակալեց Սերգո Որջոնիկիձեյին և նետեց Բախլովի բանալը: 1908 թվի ապրիլի 9-ին Թրիլիսի դատական պալատի հատուկ ատյանը Որջոնիկիձեյին դատապարտեց կայքի բոլոր իրավունքներից զրկման և ցմահ աքսորի՝ Սիբիր: Հոկտեմբերի 27-ին Թրիլիսի նույն դատական պալատի հատուկ ատյանը լրացուցիչ կերպով նրան դատապարտեց մի տարվա բերդարդիլության՝ Արխաղեայում կատարած նրա հեղափոխական աշխատանքի համար:

1909 թվի գարնան Որջոնիկիձեյին աքսորեցին Սիբիր: Բնակության վայրը նշանակված եր Յենիսեյսկի նահանգի Պինչուգի վոլոստի Պոտոսկույ դյուլը: Աքսորավայր հասնելուց յերկու ամիս հետո Որջոնիկիձեն փախչում ե և վերադառնում Բաղու, վորպեսզի անլեղալ պայմաններում շարունակի կուսակցական աշխատանքը:

1909 թ. աշնանը Բագվի բոլշևիկների կազմակերպությունը Որջոնիկիձեյին ուղարկում է Իրան (Պարսկաստան), Գիլանի նահանգը, վոր այն ժամանակ հեղափոխական շարժման թատերաբեմ եր: Նա ակտիվ մասնակցություն է դույց տալիս հեղափոխական պայքարին:

1910 թվի նոյեմբերին Սերգոն վերադառնում է Բագու և այստեղից մեկնում Փարիզ, Լենինի մոտ:

Ն. Կ. Կրուտակայան իր հիշողություններում պատմում է.

«...Մի անգամ դալիս ե սպասուհին և ասում. «Մի ինչվոր մարդ ե յեկել, վոչ մի խոսք չի խոսում Փրանսերեն. յերևի ձեզ մոտ ե յեկել»: Յես ցած իջա—տեսնեմ՝ կանգնած ե կովկասցու տեսքով մի մարդ և ժպտում ե: Բանից գուրս յեկավ, վոր Սերգոն ե: Այդ ժամանակից նա դարձավ ամենամոտիկ ընկերներից մեկը»\*:

Փարիզից վոչ հեռու, Լոնդոնոյում Լենինը 1911 թվին

ստեղծում է կուսակցական դպրոց, վորի ունկնդիրները ջոկված եյին Ծուսաստանում կուսակցական տեղական կազմակերպությունների կողմից: Այս դպրոցումն եր նաև Որջոնիկիձեն:

Որջոնիկիձեն չուտով հարկ զբաց ընդհատելու իր ուսումը: Նա նորից մեկնում է Ծուսաստան լենինյան աժենապատախանատու հանձնարարությամբ—աշխատանք կատարել նախապատաստելու և գումարելու համառուսաստանյան կուսակցական կոնֆերենցիա: Զնայած ուսակցիայից ճողմված յերկրում աշխատելու բացառիկ ծանր պայմաններին, Որջոնիկիձեյին հաջողվեց փայլուն կերպով իրադորել լենինի առաջադրանքը: Որջոնիկիձեն Թրիլիսի ըալշելյան կազմակերպության կողմից դեւդատ եր Պրադայի կոնֆերենցիայում:

Այստեղ Որջոնիկիձեն ընտրվեց ԿԿ-ի անդամ: ԿԿ-ի յոթանդամից հինգը պետք է աշխատեյին Ծուսաստանում: Ընտրություն ԿԿ-ի բյուրո՝ կազմված ընկերներ Ստալինից, Որջոնիկիձեյից և Սպանդարյանից՝ Ծուսաստանում աշխատանքը դեկավարելու համար:

ԿԿ-ի վորոշմամբ Որջոնիկիձեյին հանձնարարվեց կոնֆերենցիայի մասին զեկուցում անել Պետերբուրգի կուսակցական կազմակերպությունում: 1912 թվի վետրվարին Սերգո Որջոնիկիձեն մեկնեց Պետերբուրգ, այնուհետեւ դնաց Վոլոդայի նահանգը՝ այսուեղ աքսորում գտնվող ընկեր Ստալինի մոտ: Աքսորավայրից փախած ընկեր Ստալինի հետ միասին նա մեկնեց Բաղու, իսկ հետո՝ Թրիլիսի: Թրիլիսիում Սերգոն կուսակցական կազմակերպությանը զեկուցում տվեց Պրադայի կոնֆերենցիայի մասին:

1912 թվի ապրիլին Սերգո Որջոնիկիձեն նորից ուղեռվեց Պետերբուրգ: 1912 թվի ապրիլի 20-ին նա նորից ձերբակալում է: Վեցամյա նախական կալանքից հետո Պետերբուրգի շրջանային դատարանը Սերգո Որջոնիկիձեյին՝ կալանքից փախչելու և բոլշևիկյան աշխատանքի համար դատապարտեց յերեք տարվա տաժանակիր աշխատանքի՝ հետագայում բնակեցնելով հայկունական աքսորավայրայում:

1912 թվի հոկտեմբերին Որջոնիկիձեն շղթայակապ աթվեց և ուղարկվեց Շլիսելբուրգի բերդը:

\* Н. К. Крупская, Воспоминания о Ленине, стр. 170, Партизат, 1933 г.

Յերեք տարվա բերդարգելությունից հետո 1915 թվի Հակամամբերին Սերգո Որջոնիկիձեն ետապի կարգով աքսորվեց Արևելյան Սիբիր, Ալեքսանդրովսկի փոխադրական բանտը (Իրկուտսկի մոտ)։ Այսուղ նա մնաց մինչև Լենա գետի նավագնացության բացումը և 1916 թվի դարնանն ուղարկվեց բնակության Վիլյուսկի գավառի Նյուրբինսկի գյուղական հասարակության մեջ։ Սակայն Յակուտսկից, բժշկական աշխատողների կարիք զգացող հիվանդանոցային բժշկի խնդրանոք, Սերգո Որջոնիկիձեյին ուղարկեցին Յակուտսկից 90 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Պոկրովսկոյե գյուղը, իրեւ հիվանդանոցի բուժակի։ Աքսորված Որջոնիկիձեն մոլի պայքար եր մզում մենչեւիների, եսերների ու անարխատների գեմ, մերկացնելով իմալերի կալիստական պատերազմը պաշտպանելու նրանց գավաճանական քաղաքականությունը։

Փետրվարյան հեղափոխության հաղթության մասին Սերգո Որջոնիկիձեն իմացավ հեռավոր ուղարկում հիվանդներին այցելելիս։ Նրա ուրախությունն անսահման եր։

Համարյա ութ տարի Սերգո Որջոնիկիձեն անցկացրեց շարիզմի գերության մեջ՝ բանտերում, Շիլսուելբուրգի բերդում, ետապներում ու աքսորված։ Յարիզմը տապարիեց։ Այս հաղթանակն Որջոնիկիձեն, ինչպես և բոլոր իսկական լենինիստները, գնահատեց միայն իրեւ սոցիալիստական հեղափոխության համար պայքարելուն անմիջապես անցնելու մի պայման։

Սերգոյին ե պատկանում Յակութիայի հեղափոխական նվաճումների ամրապնդման դլխավոր գերերից մեկը։ Որջոնիկիձեն Փետրվարյան հեղափոխության առաջին իսկ որերից մտնում է Յակութական խորհրդի գործադիր կոմիտեյի կազմի մեջ, ընտրվում է Յակութական մարզի հասարակական առաջնության կոմիտեյի նախագահության անդամ, կազմակերպական ու աղխոսացիոն մեծ աշխատանք է կատարում։ Հանդես ե գալիս ժողովներում մերկացնելով եսերներին ու մենշեկիներին, իրեւ բուրժուազիայի դործակալների։

1917 թվի մայիսին Սերգո Որջոնիկիձեն մեկնում է Իրկուտսկ, իսկ այնուեղից՝ Պետրոգրադ և ամբողջովին նվիր-

վում կուսակցական մարտական աշխատանքի։ Լենինի առաջարկությամբ, Սերգո Որջոնիկիձեն մտցվում է Պետրոգրադի բոլցեկիյան կազմակերպության կոմիտեյի մեջ, ՊԿ-ի Գործադիր հանձնաժողովի, ինչպես նաև Պետրոգրադի խորհրդության կոմիտե Գործադիր մեջ։

Հուլիսյան որերին հակահեղափոխությունը, համաձայնողականների—մենշեկիլերի ու եսերների աջակցությամբ մոլեգնեց վերահաս պրոլետարական հեղափոխության դեմ։ Սկսվեցին մասսայական ձերբակալություններ, բոլցեկիյան լրագրերի ավերում։ Բուրժուազիան բացահայտողեն պահանջում եր գատաստան տեսնել Լենինի հետ։

Հավաքվում եր բոլցեկիյան կուսակցության ՎI համագումարը։ Համագումարի նախապատրաստության ու անցկացման իսկական լենինյան զեկավարությունն ապահովում եր ընկեր Ստալինը։ Լենինն իր հյուղակից և ավելի ուշ՝ չելսինֆորսից ուղղություն եր տալիս բոլցեկիների աշխատանքին, զեկավար ցուցումներ եր տալիս համագումարի սրակարգի հարցերի առթիվ։ Լենինի գերեկալիներն ստանալու համար Որջոնիկիձեն, Ստալինի հանձնարարությամբ, յերկու անդամ մեկնեց Լենինի մոտ՝ նրա հյուղակը։

Կուսակցության ՎII համագումարում ընկեր Ստալինն իր քաղաքական զեկուցման մեջ և նրանից հետո Որջոնիկիձեն իր հատուկ զեկուցման մեջ, վոր վերաբերում եր Լենինի՝ գատարան ներկայանալուն, ամենավճռական կերպով արտահայտվեցին ներկայանալու գեմ։ «...Նրանց համար կարեոր ե, —հայտարարեց Սերգո Որջոնիկիձեն, —վորքան կարելի յե շատ առաջնորդներ գուրս կորզել հեղափոխական կուսակցության շարքերից։ Մենք վոչ մի գեպօւմ չպետք է հանձննենք ընկեր Լենինին...»\*։

1917 թվի սեպտեմբերի սկզբին Որջոնիկիձեն կարճ ժամանակով ուղարկվեց Անդրկովկաս։ Նոյեմբերի 6-ին Որջոնիկիձեն Անդրկովկասից վերադարձավ Պետրոգրադ և ակտիվ մասնակցություն տվեց Հոկտեմբերյան սոցիալիստական հեղաշրջմանը։

1918 թվի հունվարի 2-ին Որջոնիկիձեն նշանակվեց

\* «Протоколы VI съезда РСДРП(б)», стр. 32. Партиздат, 1934 г.

Ուկրաինայի շրջանի ժամանակավոր արտակարգ կոմիսար և կարեռ լիազորություններ ստացավ հաց և այլ մթերքներ ժամանակարելու Խորհրդային Ռուսաստանի այն բոլոր վայրերին, վորոնք պարենալորման կարիք եյին գլում:

Լենինի—Ստալինի կուսակցության կերպով հայտարձակության կերպով հայտարձակությամբ նա ողնում եր Աւկրաինայի աշխատավորներին ամրացնելու խորհրդային իշխանությունը և կատարելու այն ժամանակ նրա առաջդրված հիմնական խնդիրը, այն եւ յերկրի խորքը տեղափոխել պարենային պաշարները, նյութական արժեքները, ռազմական հանդերձանքը:

1918 թվի ապրիլի առաջին օրերին Որջոնիկիձեն տեղափոխում ե Դոն: Ապրիլի 6-ին նա արգեն Ռուսովում և (Դոնի վրա): Այստեղ նա շարունակում է միջոցներ ձեռք առնել դիմադրություն կազմակերպելու գերմանո-հայրամակների վեմ, վորոնք հետպհետեւ շարժվում եյին դեպի հարավ, Դոնի ու Կուրանի վրա: 1918 թվի ապրիլի 9-ին բացվեց Դոնի հանրապետության բանվորական, զյուղացիական և կազակային դեպուտատների խորհուրդների առաջին համագումարը, վորն Որջոնիկիձեյին ընտրեց Դոնի հանրապետության ԿԳԿ կազմի մեջ:

Գերմանացիները մոտեցան Դոնին: Ապրիլի 29-ին Որջոնիկիձեն Ռուսություն հեռագիր ստացավ Լենինից ու Ստալինից: Լենինն ու Ստալինը կարգալրում եյին նրան՝ դադարեցնել պատերազմական գործողությունները գերմանո-հայդամական ճակատում:

Մայիսի 2-ին Որջոնիկիձեն Դոնի հանրապետության ԿԳԿ յերկու ներկայացուցիչներով մեկնում և բանակցություններ վարելու գերմանական համանատարության հետ՝ պատերազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ և նրա համար, վորպեսզի բողոք հայտնի գերմանացիների կողմից Տաղանրովը գրավելու վեմ: Տաղանրովի գրավումը գերմանացիների կողմից խախուռմն եր Բրեստի հաշտության պայմանների, վորովհետեւ Տաղանրովը ՌԽՖՍՀ-ի տերիտորիան եր: Արմյանսկայա ստանդայի մոտ գերմանական պահակները ձերբակալեցին դելեզացիան, զինաթափ արին և ուղարկեցին Տաղանրով: Սերգո Որջո-

նիկիձեն կտրուկ բողոք հայտնեց գերմանացիների կողմից Բրեստի հաշտության պայմանները խախուռմն և դելեզացիան ձերակալելու վեմ: Դելեզատներին վերագրածվեցին նրանց գենքերը և ապահովվեց նրանց անարդել վերագրածը Ռուսաստան:

Մայիսի 7-ին ավստրո-գերմանական գորքերը, հայդամակներն ու սպիտակ կազմակերպ գրավեցին Ռուսությունը: Որջոնիկիձեն իր հշելոններով վերջինը թողեց Ռուսությունը, նահանջելով նախ Բատայսկ, իսկ հետո՝ դեպի Տիխորեցկայա, վորպեսզի այնաեղից կուլով առաջանա դեպի Յարիցին: Յարիցին մտնելիս Որջոնիկիձեն կարմիր գորամասերի գլուխ անցած վճռական միջոցներ և ձեռք առնում զինաթափելու Պետրենկոյի հակահեղափոխական բանդաները, վորոնք գրավել եյին Յարիցին կայարանը:

«Դրությունն այստեղ լավ չե, —հեռազրում ե Որջոնիկիձեն Յարիցինից Լենինին և Ստալինին 1918 թվի մայիսի 23-ին, —հարկավոր են վճռական միջոցներ, իսկ տեղական ընկերները չափազանց թուլամորթ են, ողնության ամեն մի ցանկություն դիտվում ե իրեւ միջամտություն տեղական գործերին: Կայարանում կանգնած են հացով բեռնված վեց մարշրուտային գնացքներ, Մոռկվա ուղարկելու համար և չեն ուղարկվում... Նորից եմ կրկնում, վոր հարկավոր են ամենավճռական միջոցներ—Յարիցինի շուրջը մոլեզնում և հակահեղափոխությունը»\*:

1918 թ. մայիսի 25-ին պաշտպանության շտաբի արտակարգ նիստում Որջոնիկիձեն հանդես յեկալ հակահեղափոխական բանդաների վեմ պայքար կազմակերպելու պլանով, վորոնք հարձակվում եյին Յարիցինի վրա: Նա առաջարկեց քաղաքում յեղած խորհրդային դորքերը միավորել մի հրամանատարության ներքո: Ապահովելով քաղաքի իսկական պաշտպանությունը, Որջոնիկիձեն շտապում ե Կուրան:

Կուրանի և Սևծովյան շրջանի վրա եյին շարժվում գերմանական զորքերը: Անհրաժեշտ եր կազմակերպել Կուրանի պաշտպանությունը գերմանացիների վեմ, ամրապնդել յե-

\* Центральный архив Октябрьской революции. Фонд 130 с. В. Опись 2, дело № 26, лист 12, 1918 г.

բիտասարդ՝ Կարմիր բանակի զորությունը։ Մայիսի 28-ին Յեկատերինովարում բացվեց Կուբանի և Սևծովյան շրջանի Խորհուրդների արտակարգ յերրորդ համադումարը։

Որջոնիկիձեն անմիջականորեն ղեկավարում եր համագումարը։ Նա մի քանի անգամ հանդես յեկալ։ Նրա առաջարկով առանձին-առանձին զոյություն ունեցող կուբանի խորհրդային հանրապետությունն ու Սևծովյան խորհրդային հանրապետությունը միացան Կուբան-Սևծովյան միասնական հանրապետության մեջ։

1918 թվի հունիսի սկզբին, Ստավրոսովի նահանգում Դենիկինի հարձակման սպառնալիքի կապակցությամբ Որջոնիկիձեն Մելվեժենսկի գալառում կազմակերպում է հեղափոխական ճակատայինների<sup>\*</sup> համագումար, վորտեղ նրա ղեկուցման առթիվ մարտական բանաձև ընդունվեց՝ չհաղանդվել Դենիկինի հրամաններին։

Հունիսի կեսերին Որջոնիկիձեն Պրոխառնայա կայարանի մոտ ձեղքում է հակահեղափոխական ճակատը և անցնում Թերեքի մարզի սահմանները։

Այսուղ նրա ղեկավարությամբ ջախջախվեց տեղական հակահեղափոխությունը։

Բայց 1918 թվի դեկտեմբերին Դենիկինի սպիտակ բանակն ավելի ու ավելի յե մոտենում թերեքի մարզի սահմաններին։ Ինտերվենտների կողմից ջերմացված, միանալով Կուբանի հակահեղափոխությանը, նա հարձակվեց XI Կարմիր բանակի վրա։ XI բանակը, կտրված լինելով Խորհրդային Ռուսաստանից, մնաց առանց արկերի, առանց փամփուշտի<sup>\*\*</sup>։

Հանրապետության համար ծանր այդ ժամանակներում Որջոնիկիձեն Հյուսիսային Կովկասի մի անկյունից զնում է մյուսը, մի տագնապալի ճակատամասից՝ մյուսը։

Հունվարի սկզբին Հյուսիսային Կովկասի կոմունիստական կազմակերպությունների արտակարգ համագումարում, վորին ղեկավարում եր Որջոնիկիձեն, վորոշում ընդունվեց

\* «Революционный фронтовик» (Тихорецкая), № 5 от 7/VII 1918 г.

\*\* Կենարուից XI բանակի համար ուղարկված մարտական ոժանդակությունն Առտբախանում պահեցին կասպիական-կովկասյան ճակատի մինչ-ի արոցին դավաճանները մութ։

կազմակերպություն Հյուսիսային Կովկասի կարմիր ուազմաճակատ և պաշտպանություն։

Որջոնիկիձեյի պնդումով XI բանակը պետք է կենտրոնանար Վլադիկավկազում ու Գրոզնիում։ Թերեքի հանրապետությունը պետք է պաշտպանվի։ Կոմունիստները մնում են իրենց տեղերում։ Նրանց գլուխ է կանգնած, առաջվանման, Որջոնիկիձեն։ Բայց տիֆից կոտորվող բանակն սկսեց կազմակուծվել։

1919 թվի հունվարի 24-ին Որջոնիկիձեն Լենինին ուղած հեռագրում հայտնում է։

«...Արկեր և փամփուշտներ չկան։ Փող չկա։ Վլադիկավկազը, Գրոզնին մինչև այժմ վոչ փամփուշտ են ստացել, վոչ ել մի կոպեկ փող։ Վեց ամիս և պատերազմ ենք մզում, փամփուշտները գնելով հնդական ուուրլով։

Վլադիմիր Իլիչ, վասահ յեղեք, վոր հազօրդելով Զեղ այս մասին, մենք բոլորս կընկնենք անհավասար կըռվում, բայց մեր կուսակցության պատիվը չենք խայտառակի փախուստով։ Այն ժամանակ գրությունը կիրկիլի, յեթե Դուք այստեղ շպրտեք 15 կամ 20 հազ. թարմ զորք։ Փամփուշտ ավել, արկ, փող։ Առանց Հյուսիսային Կովկասի՝ Բագուն վերցնելն ու ամրացնելը անհեթեթություն է։ Գրողնու և Վլադիկավկազի բանվորների մեջ անհոգդողդ վորոշում կա կուվել, և վոչ թե հեռանալ։ Լեռնային ժողովուրդների համակրանքը մեր կողմն է։

Թանդարին Վլադիմիր Իլիչ, մահացու վասնդի մոմենտին վողջույն ենք հզում Զեղ և սպասում Զեր ողնությանը»<sup>\*\*\*</sup>։

Հունվարի վերջին գենիկինյան զորամասերը մոտեցան Վլադիկավկազին։ Քաղաքում կար ընդամենը միքանի հաղար սլին։ Ակավեցին արյունահեղ կոփիլեր։ Յոթ որ բանվորական դումարտակները, Կարմիր բանակի ջոկամները ամուր պաշտպանում եյին քաղաքը խիստ նեղող սպիտակդվարդիական բանդաներից։ Չորս որ հաղթականորեն կըռվում եյին ինգուշները։ Որջոնիկիձեն իր շտաբով տեղափոխվեց Բագորկինո՝ ինգուշների մոտ, վորպեսզի անմիջա-

\* Центральный архив Красной армии, дело № 277 с., лист 18.

կանորեն դեկավարի կոխվները։ Ճակատը 150 քայլ եր հեռու այն տեղից, վորտեղ Որջոնիկիձեն տեղավորեց իր շտաբը։

Բայց ուժը սպիտակների կողմն եր, և Վլադիկավիկազն ստիպված յեղան թողնել։ Վլադիկավիկազի կոմունիստների խումբը Որջոնիկիձեյի գլխավորությամբ ուղղվեց դեպի լեռների խորքը։


Միայն 1919 թվի ապրիլի վերջին Որջոնիկիձեն Խելսուբեթիայի և Դուչեթի վրայով անեղալ կերպով անցառ Թբիլիսի։

Սա միակ ճանապարհն եր, վորով Որջոնիկիձեն կարող եր ընկնել Մոսկվա, յեթե նրան հաջողվեր մի կերպ անցնել Հակահեղափոխական Անդրկովկասից ու Կասպից ծովից, վորտեղ տեր ու տնօրինություն եյին անում անդմացիները։

Սերդո Որջոնիկիձեն Թբիլիսիի բոլշևիկների հետ միասին նշեց Հակահեղափոխական մենչենիյան կառավարության դեմ հետադայում մզելիք պայքարի ուղիները։ Բաղվում, Որջոնիկիձեյի դալու կասպակցությամբ, նշանակվեց անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների կուսակցական լայն խորհրդակցություն։

Խորհրդակցությունից հետո Որջոնիկիձեն մեկնեց Մոսկա այն ժամանակ միակ հնարավոր, բայց արտասովոր ճանապարհով՝ Կասպից ծովով ձկնորսական առադաստանավով։ 1919 թվի հուլիսին Որջոնիկիձեն կուսակցության կողմից ուղարկվում է Արևմտյան ճակատ՝ ընկեր Ստալինի մոտ և նշանակվում ԽVI բանակի Հեղոազմխորհրդի անդամ։

Թշնամին շարժվում եր դեպի Բելոռուսիայի մայրաքաղաք՝ Մինսկը։ Զափազաց գժվար եր պարզել ճակատի իսկական դրությունը, վորովհետեւ Կարմիր բանակի ցիրուցան զորամասերի հետախուզությունները հակասական տեղեկություններ եյին տալիս թշնամու դասավորության մասին։ Յել ահա, մի մութ զիշեր, Որջոնիկիձեն Բորիսովի գալաքառական հեղկոմի անդամների ու մի տասնյակ կարմիր բանակայինների հետ միասին հրացանը ձեռքին զնում և հետիոտն հետախուզության դեպի Բորիսով։ Հետախույզնե-



Գ. Կ. ՈՐՋՈՆԻԿԻՉԵՆ 1919 թվին

ըլ թափանցում են սպիտակ լեհերի խոր թիկունքը, հասնելով համարյա մինչև Բորխովի արվարձանը, վորոշում են թշնամու ուժերը, նրա դասավորությունը։ Յերկու որ հետո Կարմիր բանակի զորամասերը վերցնում են Բորիսովը։

Արևմտյան ճակատում Որջոնիկիծեն մնաց մոտ մերեք ամիս։ 1919 թվի հոկտեմբերին կուսակցությունն ու կառավարությունը նրան տեղափոխեցին ռազմաճակատ ընդդեմ Դենիկինի։

Նա նշանակվեց XIV բանակի Հեղոազմիորհղի անդամ։ Ընկեր Ստալինի հանձնարարությամբ նա Արևմտյան ճակատից Հարավային ճակատ բերեց Լատիշական դիմիգիան։

39 Անհրաժեշտ եր վճռական բեկում ստեղծել ճակատում։ Հոկտեմբերի 20-ին Հարվածային խումբը կովով դրավեց Որյուլը։ Այդ զորամասերին գլուխ եր կանգնած Որջոնիկիծեն։

1920 թվի փետրվարի սկզբին ՌԿ(Պ)Կ ԿԿ-ի վորոշմամբ ստեղծվում ե Կուսակցական բյուրո, վորը սկիտի վերականգներ խորհրդային իշխանությունը Հյուսիսային Կովկասում։ Բյուրոյի նախագահ ե նշանակվում Սերգո Որջոնիկիծեն, տեղակալ՝ Ա. Մ. Կիրովը։

Ապրիլի լույս 28-ի գիշերը Աղբբեջանում մուսավաթական կառավարությունը տապալվեց։ Կազմված Աղբբեջանական հեղկոմը հրամիրեց Կարմիր բանակին։ Ապրիլ 28-ի ցերեկվա ժամի 4-ին կարմիր ենթոնները մտան պրոլետարական Բագու։ Ապրիլի 30-ին Որջոնիկիծեն Կիրովի հետ միասին ժամանեցին Անդրկովկասի բոլշևիկմի ազատազըրված միջնաբերդը։ Հանուն Խորհրդային Աղբբեջանի մզածայս պայքարում Որջոնիկիծեյի գերը կարճ, բայց սպառիչ կերպով գնահատել ե ընկեր Ստալինը Աղբբեջանի գելեղացիայի ընդունելությանը Կրեմլում 1936 թվի հունվարի 21-ին։ Ընկեր Ստալինը վողջունեց Որջոնիկիծեյի յերեալ ամբողությունը՝ հետեւյալ խոսքերով։

«Վողջույն Աղբբեջանն ազատազրողին։ Նա առաջինը մտավ Աղբբեջան։»

1921 թվի փետրվարի 25-ին Վրաստանի մայրաքաղաքը



դարձավ խորհրդային։ Լենինին և Ստալինին Որջոնիկիձեյի ուղարկած հեռագրում ասված է.

«Թիֆլիսի վրա ծածանվում է Խորհրդային իշխանության կարմիր դրոշը։ Կեցցե՛ Խորհրդային Վրաստանը»\*։

Այս որերին, յերբ Որջոնիկիձեն ջախջախում եր հակածեղափոխությունը Վրաստանում, Մոսկվայում ՌԿ(Բ)Կ Համագումարը նրան հեռակա ընտրեց ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի անդամ։

1921 թվի մայիսի 19-ի վորոշմամբ Համառուս. ԿԳԿ նախագահությունը Սերգո Որջոնիկիձեյին պարզեատրեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով։

Ամենաբարդ պայմաններումն եր Սերգո Որջոնիկիձեյին վիճակված խորհրդային իշխանությունը կարդի բերել Անդրբկովկասում։ Հարկավոր եր սկսել կուսակցական կազմակերպության ամբացումից, նրա աշխատանքը տուգորել պրոլետարական ինտերնացիոնալիզմի վորով։ Խորհրդային դրոշի տակ միավորված Անդրբկովկասում Որջոնիկիձեն ծավալեց բոլշևիկյան կուսակցության կուսակցական խոչըրադույն կաղմակերպչի ու ղեկավարի իր ընդունակությունները։

1921 թվի նոյեմբերի 2-ին ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Կովկասյան Բյուրոն, վորն իր նիստերը կայացնում եր Բագվում՝ Բաղվի ու Աղբբեզանի կուսակցական ղեկավար որգանների անդամների և Վրաստանի ու Հայաստանի կոմիտեների անդամների մասնակիցների 20-ից հետո ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ը նրան ուղարկում է Հյուսիսային Կովկաս, վորտեղ նա վորոշ ժամանակ աշխատեց իրեկ ՀամԿ(Բ)Կ Հյուսիսային Կովկասի յերկրությունը։

1922 թվի հունվարի 23-ին բացվեց Վրաստանի կոմունիստական կուսակցության առաջին լեզար համագումարը։ Որջոնիկիձեյի ղեկավարությունը համագումարում ապահովեց լենինյան-ստալինյան գծի հաղթանակը։

Դրանից քիչ հետո (1922 թվի փետրվարի 18—22) կայացած Անդրբկովկասյան կոմունիստական կաղմակերպությունների առաջին համագումարը, վորտեղ Որջոնիկիձեն հանդես յեկավ Կովկասյան Բյուրոյի աշխատանքի վերաբե-

րյալ քաղաքական հաշվետվությամբ, մի ցույց եր հանդիսանում այն բանի, վոր Անդրբկովկասի կոմկուսակցությունների հիմնական կորիզը խկավես միասնական և ու բոլեմիկորեն միաձուլված ե լենինյան ԿԿ-ի շուրջը։

Մարտ—ապրիլին ընկ Օրջոնիկիձեն մասնակցում է ՌԿ(Բ)Կ XI համագումարի աշխատանքներին, վորտեղ նա ընտրվում է ԿԿ-ի անդամ։ Կենտրոնական կոմիտեյի անդամ նա ընտրվում է նաև XII, XIII և XIV կուսակցական համագումարներում։

XIV կուսակցական համագումարում Սերգո Որջոնիկիձեն ջախջախիչ հարձակում է գործում սոցիալիզմի գալածաններ ու մատնիչներ Զինովյենի ու Կամենեվի դեմ։ XIV համագումարի իր ճառում նա անողոքաբար մերկացնում է այսպես կոչված «նոր ոպողիցիան», վորը վոչ մի միջոցից չեր խորշում պայմանական կուսակցության լենինյան-ստալինյան դեկավարությունը։

XIV համագումարից հետո Օրջոնիկիձեն համեմատաբար կարծ ժամանակով վերադասնում է Անդրբկովկաս։ 1926 թվի սեպտեմբերի 20-ից հետո ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ը նրան ուղարկում է Հյուսիսային Կովկաս, վորտեղ նա վորոշ ժամանակ աշխատեց իրեկ ՀամԿ(Բ)Կ Հյուսիսային Կովկասի յերկրությունը։

Հոկտեմբերի 8-ին և 9-ին Սերգո Որջոնիկիձեն հանդես է գալիս Ռոստովի (Դոնի վրա) կուսակցական և կոմյերիտական ակտիվներում «նոր ոպողիցիայի» գեմ պայքարելու մասին։

Անհաջո բոլշևիկ, Լենինի—Ստալինի կուսակցությանն անսահմանորեն նվիրված Սերգո Որջոնիկիձեն անդամում պայքարում եր կուսակցության միասնության համար, կուսակցական շարքերի միաձուլության համար։

1926 թվի նոյեմբերի 3-ին ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը Սերգո Որջոնիկիձեյին ընտրում է Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի նախագահ։ ԽՍՀՄ ԿԳԿ նախագահության վորոշմամբ նա նշանակվում է Բանվորագյուղացիական տեսչության ժողկոմ և ԽՍՀՄ ԺԿԸ նախագահ տեղակալ։

Սերգո Որջոնիկիձեն ԿՎՀ-ի գլուխավորում եր Հե-

\* «Правда» № 48 от 18 февраля 1938 г.

ղավոխության դարպացման դժվարագույն ժամանակաշրջաններից մեկում, այն ժամանակաշրջանում, յերբ ծավալվում եր՝ ժողովրդական տնտեսության վերականգնումից դեպի տեխնիկական նոր բազայի վրա նրա ռեկոնստրուկցիային անցնելու նախապարաստությունը, այն ժամանակաշրջանում, յերբ ձևավորված տրոցկիստական-պինովի վական ըլոկին արդեն անցել եր պայքարի բացահայտ հակահեղափոխական մեթոդների՝ ընդում կուսակցության և խորհրդային իշխանության:

Կուսակցության ԽV համագումարում Որջոնիկիձեն, Հանդես գալով Կվ. Հ-ԲԳԾ աշխատանքի վերաբերյալ դեկուցումով, ասաց.

«Ոպողիցիան գանում եր, վոր Կվ. Հ պետք է լինի առանց վորեւ քաղաքական կերպարանքի և, իրեն վատ խնամանուութիւնին, պետք է վագվի մեկից մյուսի մոտ, վոր պեսզի մի կերպ հաշտություն գլուխ բերի: Մենք գանում ենք, վոր ամենից առաջ դու պիտի լինեն բոլշևիկ, լինինյան, իսկ հետո կարող ես լինել Կվ. Հ-ի անդամ, Կվ-ի, շրջանային կոմիտեյի, բջիջի անդամ և այլն: Մենք դանում ենք, վոր ամենից առաջ պետք է լինել բոլշևիկ, իսկ ոպողիցիան մեզնից, Կվ. Հ-ի անդամներից պահանջում եր դադարեւ բոլշևիկներ լինելուց»\*:

Կապիտալիզմի տրոցկիստական-պինովյենվական ռեստավրատորների բլոկի ջախջախումից հետո գլուխ բարձրացրեց աջ ոպողիցիան, վորին դիմավորում եյին Բուլսարինը, Տոմսկին և Ռիկովը: Կուսակցության դեմ մղած իրենց պայքարում աջ անջատողականները շաղկապվել եյին տրոցկիստների հետ, նրանց հետ խոսքները մեկ անելով բոլոր հակահեղափոխական ուժերը միալորելու համար, վորպեսզի պայքարեն կուսակցության դեմ, Կվ-ի և ընկեր Ստալինի դեմ:

«Ընկեր Ստալինի դեմ մղված պայքարը, — ասաց ընկեր Որջոնիկիձեն ԽVI կուսակցական համագումարում, — պայքար եր մեր կուսակցության լենինյան Կվ-ի զվարությունը դեմ: Կուսակցությունը զնաց իր Կվ-ի հետեւից: Կուսակ-

ցությունը հանձին ընկեր Ստալինի տեսնում և կուսակցություն զլիսավոր դժի տոկուն պաշտպանի և Վլադիմիր Իլյիչի լսավագույն աշակերտի: Ուստի և մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը միանդամայն ճիշտ են նույնացնում ընկեր Ստալինին մեր կուսակցության զլիսավոր դժի հետ, կուսակցություն, վոր ԽՍՀՄ-ն տանում և հաղթանակից գետի հաղթանակներ»\*:

ԲԳԾ ժողովագումարը հսկայական պայքար մղեց բյուրո-կրատիզմի, անշարժության, հնասովորության և քաշչուկի դեմ պետական ապարատում: Որջոնիկիձեյի, իրեւ ԲԳԾ ժողովոմի, զլիսավոր ծառայություններից մեկն եր այս որդանի յերեսը դեպի տնտեսությունը դարձնելը: Որջոնիկիձեն ինքը մանրամասն ուսումնասիրում եր արգյունարերական շինարարության բոլոր հարցերը, սկսած կապիտալ շինարարությունից ու նորակառուցների յուրացումից և վերջացրած արտադրության բուն պրոցեսի կազմակերպումով նրա բոլոր վճռական փուլերում:

Որջոնիկիձեն շարունակ կոչ եր անում տնտեսավարներին իրենց ամբողջ աշխատանքը համակել բոլշևիկյան կուսակցականությամբ, ընդարձակել ինքնաքննադատությունը, զարգացնելով բանվորների մասսայական նախաձեռնությունը: Նա մեկից ալելի անդամ կրկնում եր, վոր միայն այդպայմաններում նրանք կիարողանան հաջողությամբ աշխատել և հաղթանակներ ձեռք բերել:

1930 թվի նոյեմբերի 10-ին Որջոնիկիձեն նշանակվեց ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության Գերագույն խորհրդի նախագահ: Համկ(բ)կ Կվ. Հ միացյալ պետությունի վորոշմամբ, վոր կայացավ գեկտեմբերի 17—21-ը, նա մըտցվեց Համկ(բ)կ Կվ Քաղաքյուրությունի մեջ վորպես անդամ:

1929—1930—1931 թվականները սոցիստական և կոնսմիկայի հիմքը գնելու տարիներն եյին: Կառուցվում եյին Մագնիկ-ա Կուզնեցկ-ը, Գորկիի ու Մոսկվայի ավտոգործարանները, Ուրալմաշ-ը և Կրամատօրսկ-ն, Ստալինորդի, Խարկովի, Զելյարինուկի տրակտորային գործարանները, սոցիստիզմի հաղթանակները հարյուրավորի բնդուաստրիալ ամբողները:

\* «XV съезд Всесоюзной коммунистической партии (б)», стено-графический отчет, стр. 377. Партиздат, 1935 г.

Մեծ պայքար ծավալվեց ծանր արդյունաբերության շինարարության համար : Սերգո Որջոնիկիձեն զործի անցալի իրեն հատուկ հեղափոխական վողեռությամբ ու բոլշևիկյան յեռանդով : Հարկավոր եր կոտրել շատ աշխատողների անշարժությունը և հնասովորությունը, վորոնք կառչել ելին հին տեմպին, աշխատանքի հին մեթոդներին, հարկավոր եր բոլշևիկորեն ձեռնամուխ լինել կաղըբերի կաղմակերպմանը ու դաստիարակմանը :

Սոցիալիստական արդյունաբերության հրամանատարը արդյունաբերությունը զեկավարում եր վոչ միայն իր մարտական գիտարանից, այլև անմիջականորեն ճակատի գիրքը բուռում — արհեստանոցներում, կասուցումների առանձին տեղամասերում :

Ստալինգրադ, Գորկի, Լենինգրադ, Խարկով, Ստալինո, Կրամատորսկ, Կամենսկոյե, Դնեպրովետրովսկ, Զապորժյե, Յանակիևսկո, Մարիուպոլ, Վորոչիլովսկ, Մալինիսկովորսկ, Զելյարինսկ, Ստալինսկ, Պրոկոպյովսկ, Կեմերովո, Նովոսիբիրսկ, Սվերդլովսկ, Նիժնի Տավիլ, Պերմ, Գրոզնի, Բադու, Կիչաս, Բորբիկի, Մակենյելիկա, Լուգանսկ, Կրիվոյ Ռու, Բերեզնիկի, Սոլիկամսկ — ահապասիկ այն բնդուստրիալ սջախների բնալ վոչ լրիվ թվարկումը, վորոնց այցելում եր Սերգո Որջոնիկիձեն :

1935 թվի հունվարին Սերգո Որջոնիկիձեն Խորհուրդների Համամիութենական VII համագումարում հանդես իշխավ հաշվեառ զեկուցումով՝ ծանր արդյունաբերության վիճակի մասին : Սերգո Որջոնիկիձենի զեկուցումը համադում հանդիսանում եր սոցիալիզմի ինդուստրիալիստական, հաղթանակների արտացոլումը :

Խորհուրդների VII համագումարը նշանակալից մի բանաձև ընդունեց .

«Լսելով և քննարկելով ծանր արդյունաբերության ժողովրդական կոմիսար ընկ. Գ. Կ. Որջոնիկիձենի հաշվեառ զեկուցումով, ԽՍՀ Միության խորհուրդների VII համագումարը վորոշում ե.

1. Ծանր արդյունաբերության ժողովրդական կոմիսարի աշխատանքը համարել միանդամայն բավարար :

2. Առաջարկել ԽՍՀ Միության կենտրոնական դորժա-

դիր կոմիտեյի նախադահությանը՝ քննարկել ծանր արդյունաբերության ամենից ալելի աչքի ընկած աշխատողներին պարզեացնելու հնարավորության հարցը»\* :

ԽՍՀՄ ԿԳԿ մարտի 22-ի վորոշման մեջ ասված է .

«ԽՍՀ Միության Ծանր արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատի գծով 1934 թվի արտադրուկան ծրագիրը գերակատարելու և արտադրության կազմակերպման ու տեխնիկային տիրապետելու զործում ձևոր բերված հաջողությունների համար ԽՍՀ Միության կենտրոնական գործադիր կոմիտեն վորոշում է .

Ծանր արդյունաբերության ժողովրդական կոմիսար ընկ. Գրիգորի Կոնստանտինովիչ Որջոնիկիձենին պարզեացներել կենինի շքանչանով» :

Ցերկրորդ հնդկամյակի տարիներին Սերգո Որջոնիկիձեն անդադար աշխատում և նոր տեխնիկայի յուրացման, գիտա-հետազոտական աշխատանքի կազմակերպման, արտադրանքի համագործման, արտադրության կուլտուրայի բարձրացման և նոր կաղըբերի պատրաստման պրոբլեմները լուծելու վրա : Նա խորապես զգում է, վոր համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ ազատազրված արտադրողական ուժերը հսկայական բարիքներ պիտի տան ժողովրդին : Իր հարցաներ մտքով նա վորոշում է նորանոր մեթոդներ ու յեղանակներ ել ավելի մեծացնելու արտադրությունը, վորապետի յերկիրն ավելի արագորեն հարստանա, վորպետի ստալինաբար պայքար մղվի մեր հայրենիքի բարզավաճման համար :

Որջոնիկիձեն միանդամից դնահատեց Ստախանովի սկսած դործի մեծ նշանակությունը : Ածխային Դոնբասի հերոսներ Ստախանովի, Դյուկանովի, Կոնցեղալովի և ուրիշների ուկորդները խորսիկում են հորատողի արտադրանքի նորմաների վերաբերյալ բոլոր հին պատկերացումները և փայլուն ապացույց են հանդիսանում այն բանի, թե «ինչպիսի հսկայական հնարավորություններ ունենք մենք և թե ինչպիս կյանքից հետ են մնացել այն վայ-դեկավար-

\* «Съезды Советов в постановлениях и резолюциях», стр. 476. Издательство «Власть Советов» при президиуме ВЦИК, 1935 г.

ները, վորոնք միայն որյեկտիվ պատճառներ են վորոնում  
իրենց վատ աշխատանքը, վատ գեկավարությունը արդա-  
րացնելու համար»:

Խոր կուսակցականության որինակ տալով, Սերդոն կոչ  
եր անում տնտեսավարներին՝ իրենց ամբողջ աշխատանքը  
տողորել բոլցելիյան կուսակցականությամբ: Կե-ի և Կվ. Հ-ի  
1933 թ. հունվարյան պլենումում ընկեր Որջոնիկիձեն ա-  
սաց.

«Կուսակցականությունը—դա գլխավորն է: Զի կարելի  
մոռանալ, վոր տնտեսավարները չըջաղատված են ամեն  
տեսակ մարդկանցով, թե՛ մերոնցով, թե՛ խորթ մարդ-  
կանցով, վորոնք փորձում են ազգել նրա վրա, փորձում են  
քայլայել նրան: Այն տնտեսավարը, այն դիրեկտորը, այն  
շեխի պետը, վոր կարողանում է գիմադրել դրան, ամբող-  
ջովին պահպանել իր կուսակցական ներքինը բոլցելիո-  
րեն,—նա կտրին է: Իսկ նա, ով սայդաքում-շեղվում է  
այս ճանապարհից, նա կկործանվի, նրանից վոչինչ չի  
դուրս գա: Կուսակցականություն—ամենից առաջ ու  
նախ և առաջ»\*:

1936 թվի հունվարին ԽՍՀ Միության կենտրոնական  
դորժադիր կոմիտեն ընկ. Որջոնիկիձեյին պարզեատրեց Աշ-  
խատանքային կարմիր դրոշի շքանշանով «1935 թվի ար-  
տադրական պլանը գերակատարելու, նոր տեխնիկայի յու-  
րացման գործում ունեցած հաջողությունների և ստախա-  
նովյան շարժման դարդացման մեջ ցուցաբերած նախաձեռ-  
ության համար»:

Անմիջականորեն Սերդո Որջոնիկիձեյի անվան հետ և  
կապված խորհրդային իրականության մի այլ նշանակոր  
յերեւոյթ՝ ինժեներա-տեխնիկական աշխատողների և տնտե-  
սավարների կանանց շարժումը:

1936 թվի հոկտեմբերի 28-ին լրացավ Սերդո Որջոնի-  
կիձեյի 50 տարին: Ամբողջ Խորհրդային յերկիրը տոնեց  
այս հորելյանն իրեն համաժողովրդական հանդես: Խորհր-  
դային Միության զանազան անկյունների՝ բանվորներից,  
ծառայողներից, կոլտնտեսականներից, դիտության և տեխ-

\* «Материалы объединенного пленума ЦК и ЦКК ВКП(б) 7—12 января 1933 года», стр. 131. Партиздат, 1933 г.

նիկայի մարդկանցից, աշակերտներից ու կարմիր-բանակա-  
յիններից, կուսակցական և վոչ-կուսակցական բոլցելինե-  
րից հազարավոր վողջույններ ստացավ իր 50-ամյակի որը  
խորհրդային ժողովրդի և բոլցելիյան կուսակցության սի-  
րելին, նրանց խոշորակույն դեկավարներից մելք՝ Սերդո  
Որջոնիկիձեն:

Սերդոյի անվան հետ են կապված սոցիալիզմի մեծա-  
գույն հաղթանակները: ԽՍՀՄ գարձել և համաշխարհային  
հանրաճանաչ խողուստրիալ պետություն—սրա մեջ և մեր  
կուսակցության հավատարիմ զավակ, ստալինյան ժողկոմ  
Սերդո Որջոնիկիձեյի հսկայական ծառայությունը:

1937 թվի փետրվարի 18-ին կտրվեց Սերդոյի սքանչելի  
կյանքի թելը:

Խորհրդային ժողովուրդն ընդմիջության մեջ հիշողության  
մեջ կպահած բոլցելիյան կուսակցության սիրելի զավակի  
կերպարանքը, մինչեւ վերջին շունչը Լենինի—Ստալինի գոր-  
ծի, սոցիալիզմի հաղթանակի համար մարտնչած Սերդո Որ-  
ջոնիկիձեյի պայծառ կերպարանքը:

### ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՄՆ ՈՒ ՈՒՍՈՒՑԻՉԾԲ

Պրոլետարական մեծ հեղափոխական, Լենինի և Ստա-  
լինի աշակերտ ու զինակից Գրիգորի Կոնստանտինովիչ Որ-  
ջոնիկիձեն խորհրդային յերիտասարդությանը սիրում եր  
բոլցելիկի մեծ ու սրտագին սիրով: Իրեն մեր կուսակցու-  
թյան ականավոր գործիչ, նա յերիտասարդության մեջ ար-  
մատավորում եր նոր աշխարհը կառուցողների բոլցելիյան  
հատկություններ, խոր կուսակցականության, նրա գիտակ-  
ցության մեջ մացնում եր անդրդվելի հավատ կոմունիզմի  
հաղթանակի վերիտերմամբ:

«Սովորեցե՛ք բանմուրներին ու գյուղացիներին ծառայե-  
լու մեծ դործը, իմացե՛ք, վոր այս ճանապարհին ձեզ սպա-  
սում ե փառք, յերջանկություն ու հաղթանակ»:

Այս խոսքերը 17 տարի առաջ գրել ե ընկեր Որջոնիկի-  
ձեն Աղրբեջանի կոմունիտատական յերիտասարդական միու-  
թյան I համագումարին ուղղած իր վողջույնի մեջ:

\* «Коммунист» № 69 от 23 июля 1920 г., Баку.

Անդրկովկասի բուշեկների ղեկավար, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի խորհրդային իշխանության կաղմանքի չքրիզորի կոնստանտինովիչը հանդիսացավ նաև անդրկովկասյան կոմիտետի խորհրդական ստեղծիչը: Ընկեր Սերգոյի նախաձեռնությամբ 1920 թվին հրավիրվեց Ադրբեջանի կոմիտետի խորհրդական համագումարը: Յարական ընդհատակի բոլոր ձախորդություններն ապրած, լինիյան դրամի տակ յերեք հեղափոխություն անցած բուշեկները, կարծիք բանակի պանծալի հրամանատարներից մեկը՝ նա վոզեշնչված ասում էր յերիտասարդ սերնդին կոմունիզմի վերահաս հաղթանակի մասին, նրա զիտակցության մեջ գաստիարակում եր բոցավառ հանվառ բանվոր դասակարգի դործի նկատմամբ, կոչ եր անում նրան բեզմավոր աշխատանք կատարելու խորհրդային իշխանության բարորության համար:

Ամրապնդելով Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները, Գրիգորի Կոնստանտինովիչն անդադար ընդարձակում եր կուսակցության կազմը մասսաների հետ:

Այն ժամանակաշրջանում ազգային հարցը չափազանց սրված եր Անդրկովկասում: Բուշեկները Սերգո Ռոջոնիկինի ղեկավարությամբ կատաղի պայքար ելին մղում վրացական մենչեւիկների, Հայկական գաշնակների ու աղբբեջանական մուսավաթիստների մնացորդների նացինալիստական ազգեցության դեմ: 1921 թվի ոսսոսոսի 12-ին թիֆլոսում գումարված կուսակցական յերկրային խորհրդակցության\* մեջ ընկեր Ռոջոնիկինի խոսեց այն մասին, վոր աղքային ատելությունը, փոխադարձ կողոպուտն ու խաբերայությունը զաշնակների, մուսավաթիստների ու մենշևիկների «քաղաքական իմաստության» հիմքն ելին: Նա դրանորեց ազգամիջյան պատերազմի դարձութելի պատկերները, վորի ձեռնարկողներն ելին մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթիստները՝ բանվոր դասակարգի ու դյուզացիության այդ անարդ դաշնանները:

Ընկեր Սերգոյի առաջարկությամբ 1921 թվի սեպտեմբերի 1-ին հազվում գումարվեց կոմունիստական յերիտասարդության համակովկասյան Դ համագումարը: Ընկեր Ռո-

ջոնիկինի այդ համագումարի ղլիավոր ուշադրությունն ուղղում և ազգային յերկուսակության դեմ: Իր վողջույնի մեջ ՍԵրգոյն զրում եր. «Յերիտասարդությունը, խորհրդային իշխանության կարմիր դրաշի ներքո և մեր կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հպարտորեն դուրս կպոկի իր հիշողությունց անիժյալ անցյալի մնացածությանց»\*:

Նույն բանի համար կոչ արեց ընկեր Ռոջոնիկինի Անդրկովկասի կոմիտետի խորհրդական նաև յերկրորդ համագումարին (հունվար, 1923 թիվ), մատոնանշելով, վոր պրոլետարիատը պետք ե իր յերիտասարդ սերունդը դաստիարակի ինտերնացիոնալ վորով, վոր նա պետք ե դառնա բոլչիվիկյան կուսակցության ազգային քաղաքականության—աշխատավորների յեղայրության քաղաքականության—լավագույն կլոսը:

Համագումարն անցավ կովկասի հեղափոխական յերիտասարդության կատարյալ միասնության ու յեղայրության նշանով:

Կուսակցական համագումարներում ու խորհրդակցություններում տված իր հետագա ղեկավումներում, յելույթներում Ռոջոնիկինի ընդդում եր կոմիտետի խորհրդական աճման և նրա աշխատանքին ճիշտ ուղղություն տալու հատուկ նշանակությունը: Կոմունիստական կազմակերպությունների անդրկովկասյան II համագումարում 1923 թվի մարտի 19-ին ընկեր Ռոջոնիկինի կոմունիստների ուշադրությունն եր հրավիրում յերիտասարդության մեջ աշխատելու վրա: Նա ընդդում եր, վոր յերիտասարդության համար մզգող պայքարը դասակարգային պայքար ե:

Վրացական մենշևիկները փորձում ելին յերիտասարդությունը հակագրել բուշեկիներին: Բայց Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների արդեն II համագումարը կարողացավ նշել, վոր մեծ բեկում ե տեղի ունեցել վրացական յերիտասարդության մեջ: Ընկեր Ռոջոնիկինի համագումարում ասաց, վոր յերիտասարդության մեջ մեծ ձգտում կա կոմիտետի խորհրդական մանելու, վոր

\* «Правда Грузии» № 151 от 2 сентября 1921 г., Тифлис.

«յերիտաստարությունը պնում և մեր հետեւից, նա չի կարող չքնալ մեր հետեւից։ Միայն թե հարկավոր և ամեն կերպ ողնել մեր յերիտաստարդական միությանը»\* :

Գրիգորի Կոնստանտինովիչի ղեկավարությամբ վրացական բոլշևիկները լիկվիդացիայի յենթարկեցին մենչեւիցան յերիտաստարդական սպորտական «Շեվարդենի» ընկերությունը։ Նրա փոխարժեն ստեղծվեց «Սպարտակ» ընկերությունը։

Ընկեր Որջոնիկիձեն բոլշևիկներին սպորտեցնում եր տիրապետել կոմյերիտմիության կուսակցական ղեկավարման արվեստին։ «Մեզ հարկավոր և տիրապետել կոմյերիտական շարժմանը, —ասում եր նա։ —Մեր կուսակցությունը կարող է հաղթանակող դուրս դալ, կարող և վատահորեն առաջ դնալ, յեթե միայն մեզ հաջողվի առաջ քաշել նորանոր յերիտաստարդ կաղըքը մեր ժառանփներից» (Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների II համադրումարում տված զեկուցումից)։ Գրիգորի Կոնստանտինովիչը այն ժամանակ մատնանշում եր, վոր Անդրկովկասի պայմաններում, վորտեղ հաճախ թաղավորել են նահապետականությունը, խավարը, կրոնական ու կենցաղային նախարարությունները, կոմյերիտմիությունը հանդիսանում ե կուսակցության և խորհրդային իշխանության կարևորագույն հետարանը։

1925 թվի սեպտեմբերի 24-ին ընկեր Սերգոն Ռիկ(ր)Կ Անդրկովկասյան յերկրումի պղենումում հանդես յեկավ յերիտաստարդության գաստիարակման ինդիբների վերաբերյալ ճառություն։ Համարյա 12 տարի առաջ արտասանած այդ ճառը չի կորցրել եր թարմությունն ու սրությունը նաև այսոր։ Նրանում Գրիգորի Կոնստանտինովիչը նկարագրում է յերիտաստարդության զարդացման ու դաստիարակման ամենալավ հետանկարներ։ Նա ասել է, վոր կոմյերիտական որինակելիք պիտի բոլոր տեսակետներից, իսկ սրա համար հարկավոր են դիտելիքներ, դիտելիքներ ու մի անդամ ել դիտելիքներ։ «կոմյերիտականը չի կարող բավարպել հարցերին մակերևորեն ծանոթանալով, նա

\* «Стенографический отчет II съезда коммунистических организаций Закавказья», № 5, изд. Заккрайкома, 1923 г.

պետք ե դրանք ռւսումնասիրի հիմնավորապես ու բարեխիղճ կերպով»\*։

Իսկ վորպիսի չնորհապարա խնդիրներ եր նա զնում դյուլի կոմյերիտմիության առաջ։

«Կոմյերիտականը, —սովորեցնում եր ընկեր Սերգոն, — եր աշխատանքով պետք ե ցույց տա, վոր նա գյուղի ակտիվ կառուցողն ե, և վոչ թե զատարկախոս։ Կոմյերիտականը լավագույն կուլտաշխատողը պիտի լինի գյուղում, մեր կուսակցության և խորհրդային իշխանության լավագույն աղիտատորը։

Կոմյերիտմիությունը պետք ե դառնա խորհրդային արդարության ու խորհրդային ճշմարտության մարմնացումը գյուղում։ Նա պետք ե դառնա խորհրդային վատ, անազնիվ աշխատողներին մերկացնողն ու բարձրագույն՝ արդարության պահապանը դուրացնության աչքում»։

Խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության շահերի վերաբերմամբ ազնվություն և արգարացնություն ցուցաբերելով միայն կոմյերիտմիությունը կերպողանա նվաճել բոլոր աշխատավորների անսահման և անվերապահ վատահությունն ու սերը։ Ինչպես իսկական պարտիզան, ընկեր Որջոնիկիձեն աճեցնում եր բանափրդակարգի յերիտաստարդ տունկը, անվանելով այն «մեր հպարտությունը, մեր հույսը»։

Դեռևս 1925 թվին նա ասում եր, վոր «կոմյերիտմիությունը մեր ապագա ինտելիգենցիան «պետք ե պարտության մատնի բուրժուական ինտելիգենցիային, բուրժուական գիտությանը, նա պետք ե հոգևոր մնանդ տա ժողովրդին, նա պետք ե լինի աշխատալոր յերիտաստարդության կուլտուրական առաջնորդը»։

Տնտեսական շինարարության ղեկավար Գրիգորի Կոնստանտինովիչը ֆջիլի-ի նախադահին, իսկ այնուհետև ծանր արդգունաբերության ժողկոմի պաշտօնում դաստիարակում, սովորեցնում, սնուցանում և յերիտաստարդության միջից մեր տեխնիկական ինտելիգենցիայի նոր կաղըքը։

1931 թվին, յերբ հակահեղափոխական «Արդյունաբերական կուսակցության» դատավարությունից հետո բան-

\* «Заря Востока» № 986 от 25 сентября 1925 г., Тифлис.

Վար դասակարգի միջից տեխնիկական նոր ինտելեկտնոցիա առեղծելու հարցն իր ամբողջ հասակով ծառացավ յերկրի առաջ, ընկեր Սերգոն ասում եր (արդյունաբերական ձեռնարկությունների աշխատազների Համամիութենական կոնֆերենցիայում 1931 թվի հունվարի 30-ին)։

«Գետք և ճանապարհ տալ յերիտասարդությանը և ամեն կերպ ողնել նրան։ Յերիտասարդությանը պետք է պահել-պահպանել, նայել, վրապեսի նա դրված լինի պատշաճ աշխատանքի, չքչել նրան դրասենյակ, այլ անմիջականորեն զործի գնել, թող նա սկսի փոքրից, սկսի ցեխից։ Նա պետք է անցնի արտադրական աշխատանքի բոլոր աստիճանները, վորպեսի գառնա լավ, փորձված ինժեներներ» («Կոմսոմոլյան Պարտականության ամենամասնակարգ արդյունաբերության առաջատար աշխատանքի վեհականությանը և ամեն կերպ ողնել նրան։ Յերիտասարդությունը ինժեներների աշխատանքի բանդավառությունը, նրա հարվածային աշխատանքը տնտեսական ճակատում։ Համկ(ր)կ ԽՄԻ կոնֆերենցիայի բարձր տրիբունայից (հունվար—փետրվար 1932 թիվ) ընկեր Սերգոն ասել ե.

«Բանվոր դասակարգի շարքերում մեր յերիտասարդությունը, առանձնապես կոմյերիտական յերիտասարդությունը, հսկայական գեր խաղաց զործարաններում, կառուցումներում՝ իր խանդավառությամբ վարակելով բոլոր շրջապատողներին։ Աչա բանվորական մասսաների ու բանվոր յերիտասարդության այս վերաբերմունքը հնարավորություն տվեց մեզ մի շարք հաղթանակներ տանելու։ Բանվոր դասակարգի խանդավառությունը, կուսակցության դեկամարդությունը, կոմյերիտամիության աշխատանքը մեզ տվին 1931 թվի հաջողությունները»\*։

Ընկեր Սերգոն հոգատար ձեռքով հնդամյակի յերիտասարդային աշխատանքի առաջնական տարավ ինդուստրիալ կուլտուրայի գաղաթները, դեպի սոցիալիստական արդյունաբերության կառավարումը։

Սցելելով Ստալինդրագի տրակտորային գործարանը, ընկեր Որջոնիկիձեն նկատեց միքանի, այն ժամանակ դեռևս միանդամյան յերիտասարդ, ինժեներներ։ Յերբ գործարանի

\* С. Орджоникидзе, Итоги развития промышленности за 1931 год и задачи 1932 года, стр. 51. Партиздат, 1932 г.

շեկավարները գալիս ելին նրա մոտ զեկուցելու, նա հարցում իր անում այդ ինժեներների կյանքի ու աշխատանքի մասին, միքանի անգամ կանչել և դրանց Մոսկվա, Հանձնարարել և «իրրե փորձ» լուծել առանձին խողիբներ, իսկ հետո ամենից ընդունակներին առաջ և քաշել արդյունաբերության պատասխանատու պատուելում։ Այսպես և ընկեր Սերգոն անցեցրել հարյուրավոր յերիտասարդ հրամանատարներ սոցիալիստական ինդուստրիայի համար։ Ինչպես չողատար հայրը ուղղություն է տալիս իր սիրելի վորդուկային, այսպես և Գրիգորի Կոնստանտինովիչը ուղղություն էր տալիս սոցիալիզմի յերիտասարդ կազմերին դեպի վարպետություն։ Վորքան ջերմորեն և ուրախ ելին հնչում նրա խոռոչերը Համկ(ր)կ կկ և կվշ հունվարյան միացյալ պեհումում (1933 թվին), յերբ նա պատմում էր խորհրդային յերիտասարդ ինժեներների մասին։ «Առաջ քաշել, առում եր նա, —յերիտասարդ ինժեներների ահա այս նոր խաղը, գնել նրանց իրենց տեղերը՝ սա մեծ խնդիր է, վոր սիրուի կատարեն կուսակցությունն ու տնտեսավարները»։

Ընկեր Սերգոն անխայորեն հարձակվում և առանձին տնտեսավարների կոնսերվատիվմի դեմ, վորոնք վախենում ելին յերիտասարդության «անփորձությունից» և նրան պահում հետին տեղերում։ ԽՄԻ կուսակցական համագումարի (1934 թվին) դեկտաների ծափահարության տակ ընկեր Սերգոն հայտարարեց, վոր կուսակցությունը դաստիարակելու յերիտասարդ կազմերին, աջակցելու յե նրանց և առաջ և տանելու։

